ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ-9

ք. Երևան «23» փետրվարի 2022թ.

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Տ. Մարտիրոսյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տվյալների վերլուծության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 1 175 000 (մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[2131]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են 2022 թվականի հունվարի 1-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:[1]

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ք. Երևան, Պուշկինի 56ա ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011023067 ՀՎՀՀ 02572073	Մանվել Ջալավյան Ա/Ձ ք. Երևան, Նոր Նորք, Գալշոյան փ., 19շ,12բն «Ինեկո Բանկ» ՓԲԸ Հ/Հ 2050032155921001 ՀՎՀՀ 82934656
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
«23» փետրվարի 2022թ. կնքված
N ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ- 9 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀդրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50311120/1	Հավելված 1.1-ով նախատեսված ծառայությունների մատուցում՝ պատվիրատուի մոտ պահանջ առաջանալու դեպքում	դրամ	600 000	1	ք. Երևան, Պուշկինի 56ա	2022 թվականի փետրվարից մինչև 2022 թվականի դեկտեմբեր
2	50531200/1	Հավելված 1.1-ով նախատեսված ծառայությունների մատուցում՝ պատվիրատուի մոտ պահանջ առաջանալու դեպքում	դրամ	575 000	1	ք. Երևան, Պուշկինի 56ա	2022 թվականի փետրվարից մինչև 2022 թվականի դեկտեմբեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մանվել Ջալավյան Ա/Ձ
ք. Երևան, Նոր Նորք, Գալշոյան փ.,
19շ,12բն
«Ինեկո Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.1
«23» փետրվարի 2022 թ. կնքված
Ն ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ-9 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐ
1-ին չափաբաժին

N	Ծառայությունների անվանումները	ՀՀ դրամ
	CPV կոդ՝ 50311120/1– համակարգչային սարքերի պահպանման – վերանորոգման ծառայություններ	
1	**Համակարգիչներ եւ Ցանցային սարքեր**	
1.1	Պրոֆիլակտիկա	2000
1.2	BIOS -ի վերածրագրավորում	1500
1.3	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler	500
1.4	CPU-ի հովացուցիչի փոխարինում կամ տեղադրում ներառյալ Պ4 Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ (Cooler for CPU P4 Intel original), կամ համարժեքը	2000
1.5	CPU-ի հովացուցիչի փոխարինում կամ տեղադրում ներառյալ համապատասխան (LGA775, LGA 1150, LGA 1156, LGA 1155, Socket G1, Socket G2, LGA-1151) սոկետի համար նախատեսված, կամ համարժեքը	2800
	MB (Հիմնական տպասալիկ)	
1.6	MB նորոգում ներառյալ պահեստամասեր	4500
1.7	MB չիփսեթի փոխարինում կամ տեղադրում	1200
1.8	MB փոխարինում կամ տեղադրում ներառյալ 478 սոկետ ՎԳԱ օն բորդ, (478 socket, VGA on board), կամ համարժեքը	6000
1.9	MB փոխարինում կամ տեղադրում ներառյալ Ասուս Ինտել Հ110 չիպսեթ, ASUS Intel H110 chipset,PCI-Exp) կամ համարժեքը	26000
1.10	MB փոխարինում կամ տեղադրում ներառյալ Ասուս Ինտել Հ67 չիպսեթ, (ASUS Intel H67 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	20000
1.11	MB փոխարինում կամ տեղադրում ներառյալ Ասուս Ինտել Հ110 չիպսեթ, (ASUS Intel H110 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	34500
	Պրոցեսոր (CPU)	
1.12	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Պենտիում 4/2.4գ 533/800 մhg 478 փին (CPU P4/2,4g 533/800 mhz 478pin),կամ համարժեքը	1500
1.13	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.0ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.0GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը	2000
1.14	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Դուալ Քորե Դ 820 (2,8ԳՀg) ԼՋԱ775, 2x1024, 800ՄՀg (Dual Core D 820 (2,8GHz) LGA775, 2x1024, 800MHz), կամ համարժեքը	2500

1.15	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե 2 Դուո Ե7300 (2,66ԳՀg) , 3072, 1066ՄՀg (Core 2 Duo E7300 (2,66GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը	3000
1.16	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե 2 Դուո Ե8300 (2,8ԳՀg), 6144, 1333ՄՀg (Core 2 Duo E8300 (2,8GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	4000
1.17	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 2400 (3.1ԳՀg) , 6144, 1333ՄՀg (Core i5 2400 (3.1GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	12000
1.18	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 առաջին սերնդի, կամ համարժեքը	10000
1.19	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 երկրորդ սերնդի, կամ համարժեքը	11000
1.20	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 երրորդ սերնդի, կամ համարժեքը	12000
1.21	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 չորրորդ սերնդի, կամ համարժեքը	13000
1.22	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 վեցերորդ սերնդի, կամ համարժեքը	14000
1.23	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 երկրորդ սերնդի, կամ համարժեքը	15000
1.24	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 երրորդ սերնդի, կամ համարժեքը	16000
1.25	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 չորրորդ սերնդի, կամ համարժեքը	17000
1.26	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե i5 ութերորդ սերնդի, կամ համարժեքը	126000
	Օպերատիվ հիշողություն (RAM)	
1.27	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ400 512ՄԲ ՊՍ3200 (DDR400 512MB PC3200),կամ համարժեքը	1500
1.28	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյաւ ԴԴՌ400 1024ՄԲ ՊՍ3200 (DDR400 1024MB PC3200),կամ համարժեքը	3500
1.29	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ4 4 ԳԲ 2133ՄՀՑ (DDR4 4GB 2133MHZ),կամ համարժեքը	22000
1.30	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ),կամ համարժեքը	4000
1.31	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՑ (DDR2 2048M 667/800MHZ),կամ համարժեքը	6500
1.32	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ (DDR3 2048M 1333MHZ),կամ համարժեքը	7500
1.33	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ4 2048Մ 2133ՄՀՑ (DDR4 2048M 2133MHZ),կամ համարժեքը	14000
	Վիդեոքարտեր	
1.34	SVGA փոխարինում կամ տեղադրում ներառյալ էՋիՊի 256մբ(AGP 256Mb) կամ համարժեքը	6500
1.35	SVGA փոխարինում կամ տեղադրում ներառյալ Նվիդիա ՋիՖ 1024Մբ ՊիՍիԱյ-էքսպ (Nvidia GF 1024Mb PCI Exp) կամ համարժեքը	21000
	Կոշտ սկավառակներ (HDD)	

1.36	HDD փոխարինում կամ տեղադրում ներառյալ ՀԴԴ 500գբ 7200ռպմ (HDD 500GB 7200RPM),կամ համարժեքը	23000
1.37	HDD փոխարինում կամ տեղադրում ներառարյալ ՀԴԴ 1000գբ 7200ռպմ (HDD 1TB 7200RPM),կամ համարժեքը	27500
1.38	SSD փոխարինում կամ տեղադրում ներառարյալ ՍՍԴ 256գբ (SSD 256GB) կամ համարժեքը	24000
1.39	SSD փոխարինում կամ տեղադրում ներառարյալ ՍՍԴ 512գբ (SSD 512GB) կամ համարժեքը	36000
1.40	SSD փոխարինում կամ տեղադրում ներառարյալ ՍՍԴ 128գբ (SSD M.2 128GB) կամ համարժեքը	14000
1.41	SSD M.2 տեսակի փոխարինում կամ տեղադրում ներառարյալ ՍՍԴ 256գբ (SSD M.2 256GB) կամ համարժեքը	26000
	Օպտիկական սկավառակիրներ	
1.42	CD-RW, DVD-RW նորոգում	300
1.43	DVD-RW փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW),կամ համարժեքը	8500
	Սնուցման աղբյուրներ	
1.44	Սնուցման բլոկի նորոգում ներառյալ պահեստամասեր	2500
1.45	Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում ներառյալ Սնուցման բլոկ 500 Վատ (Power supply Case 500W), կամ համարժեքը	7800
	Ցանցային սարքեր	
1.46	Ցանցային քարտի տեղադռում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000), կամ համարժեքը	5200
1.47	Ցանցային կոմուտատորի վերանորոգում ներառյալ պահեստամասեր	2500
1.48	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 5 պորտ 10/100/1000 Mbps	4200
1.49	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 8 պորտ 10/100/1000 Mbps	6000
1.50	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 16 պորտ 10/100/1000 Mbps	18500
1.51	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 24 պորտ 10/100/1000 Mbps	35000
1.52	WiFi 5 տեսակի երթուղիչի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր	27000
2	**Նոութբուք**	
2.1	Պրոֆիլակտիկա	4000

2.2	Նոութբուքի վերանորոգում ներառյալ պահեստամասեր	6000
2.3	Նոութբուքի կոշտ սկավառակի փոխարինում կամ տեղադրում ՍԱՏԱ 500գբ 5400ռպմ (SATA 500gb 5400rpm)	21000
2.4	Նոութբուքի կոշտ սկավառակի փոխարինում կամ տեղադրում ՍԱՏԱ 1 S 5400ռպմ (SATA 1 T 5400rpm)	26500
2.5	Նոութբուքի կոշտ սկավառակի փոխարինում կամ տեղադրում ՍՍԴ 256գբ (SSD SATA 256 gb)	24000
2.6	Նոութբուքի կոշտ սկավառակի փոխարինում կամ տեղադրում ՍՍԴ 512գբ (SSD SATA 512 gb)	41000
3	**Մոնիտոր**	
3.1	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 17"	2500
3.2	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 19"	3500
3.3	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 22"	4500
3.4	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 24"	6500
3.5	Վերանորոգում (ֆոկուսի կարգավորում,գունահամատեղող մեխանիգմի կարգաբերում)	3000
3.6	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	6000
4	**Անխափան սնուցման սարք**	
4.1	Ղեկավարող սալիկի վերանորոգում	4500
4.2	Մարտկոցի փոխարինում 12V , 7A	8000
4.3	Մարտկոցի փոխարինում 12V , 9A	13000
4.4	Մարտկոցի փոխարինում 12V , 18A	21000
5	**Սկաներ**	
5.1	Պրոֆիլակտիկա	2000
5.2	Սկաների վերանորոգում նեռառյալ պահեստամասեր	3000
5.3	Սկաների վերանորոգում առանց պահեստամասեր	500
6	**Լազերային տպիչ**	

6.1	Պրոֆիլակտիկա	4000
6.2	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)	2000
6.3	Վառարանի թերմո թաղանթի փոխարինում (պահեստամասերով)	3500
6.4	Վառարանի ռետինե լիսերի փոխարինում (պահեստամասերով)	5200
6.5	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ 1018/1020/1300/1320/1160/P1102/3050/2015 Canon 3010/4410/, Canon LBP6030 կամ համարժեքը)	1800
7	**Թանաքաշիթային տպիչ**	
7.1	Պրոֆիլակտիկա Epson L110, Canon ip 2700 Epson L3100, Epson L222	3000
7.2	Վերանորոգում (առանց պահեստամասերի) Epson L110, Canon ip 2700 Epson L3100, Epson L222	3500
7.3	Վերանորոգում պահեստամասրով Epson L110, Canon ip2700 Epson L3100, Epson L222	6000
8	**Պատճենահանող սարք**	
8.1	Պրոֆիլակտիկա	6000
8.2	Էլեկտրոնիկայի վերանորոգում	4200
8.3	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը	3000
8.4	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը	2500
8.5	Վառարանի ռեգինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը	4500
8.6	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ֆետրե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը	2800
8.7	Թմբուկի փոխարինում ներառաւ Թմբուկ Canon կամ համարժեքը	6000
8.8	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon PC860/7161 կամ համարժեքը	1200
8.9	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A3 լումինիսցենտային, կամ համարժեքը	1800
8.10	Կարոտրոնի բլոկի փոխարինում	2000
8.11	Կարոտրոնի լարի փոխարինում	300
9	**Սերվերային համակարգիչներ**	
9.1	Սերվերների պորֆիլակտիկա	10000

9.2	Սերվերային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչ	8000
9.3	Սերվերային պրոցեսորի (Intel(R) Xeon(R) E3-1220 v3, Intel Xeon E-2124 3.3GHz, Intel(R) Xeon(R) E3-1220 v5, Intel(R) Xeon X3363) հովացուցիչի փոխարինում կամ տեղադրում ներառյալ հովացուցիչը	30000
ԸՆԴԱՄԵՆԸ		1,026,300

2-րդ չափաբաժին

N	Ծառայությունների անվանումները	ՀՀ դրամ
CPV կոդ՝ 50531200/1 – էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման – պահպանման ծառայություններ		
10	**ԿՈՆԴԻՑԻՈՆԵՐՆԵՐ**	
10.1	Դիագնոստիկա	3000
10.2	Պրոֆիլակտիկա	15000
10.3	Խցանման վերացում	2000
10.4	Արտահոսքի վերացում	2000
10.5	Խլադոգենի լիցքավորում (ֆրեոն), կամ համարժեք (1 կգ)	8000
10.6	Ֆիլտրների փոխարինում ֆիլտրները ներառյալ	6000
10.7	Կոնդիցիոների հանում և տեղադրում	25000
10.8	Ռեվերսի կլապանի փոխարինում ներառյալ պահեստամասերը	3500
10.9	Ռելեյի փոխարինում ներառյալ ռելեն	3500
10.10	Ֆեն-շարշիչի փոխարինում ներառյալ պահեստամասերը	4500
10.11	Կառավարման պլատայի վերանորոգում	8700
10.12	Կոնդենսատորի փոխարինում ներառյալ 25mf, 35mf, 45mf, 60mf կամ համարժեք	10000
11	**Սառնարանի նորոգում և սպասարկում**	
11.1	Դիագնոստիկա	2000
11.2	Պրոֆիլակտիկա	4000
11.3	Խլադոգենի լիցքավորում (ֆրեոն), կամ համարժեք	12000
11.4	Ֆիլտրների փոխարինում ֆիլտրները ներառյալ	6000
11.5	Տերմոստատի փոխարինում ներարյալ տեռմոստատ	8700
11.6	Կոմպրեսորի փոխարինում ներարյալ կոմպրեսորվ մինչև 150ԿՏ	16000
11.7	Կոմպրեսորի փոխարինում ներարյալ կոմպրեսորվ 150-240 ԿՏ	20000
11.8	Ռելեյի փոխարինում ներառյալ ռելեն	4500
11.9	Կառավարման պլատայի վերանորոգում	5200
ԸՆԴԱՄԵՆԸ		169,600

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ք. Երևան, Պուշկինի 56ա ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011023067 ՀՎՀՀ 02572073	Մանվել Ջալավյան Ա/Ձ ք. Երևան, Նոր Նորք, Գալշոյան փ., 19շ,12բն «Ինեկո Բանկ» ՓԲԸ Հ/Հ 2050032155921001 ՀՎՀՀ 82934656
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2

«23» փետրվարի 2022թ. կնքված
N ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ- 9 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հերթական չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	100 000	100 000	450 000	450 000	450000	850 000	850 000	850 000	1 175 000	1 175 000	1 175 000	600 000
2	50531200/1	էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ												575 000
ԸՆԴԱՄԵՆԸ														**1 175 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մանվել Ջալավյան Ա/Ձ
ք. Երևան, Նոր Նորք, Գալշոյան փ.,
19շ,12բն
«Ինեկո Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«23» փետրվարի 2022թ. կնքված
N ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ- 9 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» փետրվարի 2022թ. կնքված
N ՄԻՊԱ-ՄԱԾՁԲ- 9 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն